ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 27.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 290-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետև՝ Պալատ) խորհուրդը՝ նախագահությամբ Արսեն Հարությունյանի, խորհրդի անդամներ՝ Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռուբեն Հակոբյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի և Դավիթ Վարդիկյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Միլենա Ալեքսանի Նիկոյանի բողոքը (մուտք՝ 13.05.2026թ. № 1324-2026) ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2026 թվականի թիվ 290-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **Գործի նախապատմությունը**.

Միլենա Ալեքսանի Նիկոյանը (**այսուհետև նաև՝ Բողոքաբեր**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ՇԴ/0212/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի Աղասի Գագիկի Եգանյանի ընդդեմ Միլենա Ալեքսանի Նիկոյանի՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությամբ՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին:

Ըստ Բողոքաբերի՝ նշված քաղաքացիական գործով հայցվոր Աղասի Եգանյանի ներկայացուցիչը հանդիսանում է փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանը (**այսուհետև նաև՝ Փաստաբան**), իսկ Բողոքաբերի ներկայացուցիչը՝ փաստաբան Տիգրան Ղազարյանը:

Բողոքաբերը հայտնել է, որ 21.01.2026թ. իր բնակության վայրում դատարանի որոշմամբ սահմանված տեսակցության ընթացքում Փաստաբանը, տեղեկացված լինելով, որ ինքը ներկայացված է փաստաբանով, առանց վերջինիս ներկայության և համաձայնության սկսել է անմիջականորեն հաղորդակցվել իր հետ, ուղղել երեխայի խնամքի, քնի, սննդի ռեժիմի և ծնողավարման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև փորձել է ստանալ քաղաքացիական գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ:

Բողոքաբերը նշել է նաև, որ Փաստաբանի հարցերին ինքը բազմիցս պատասխանել է, որ այդ հարցերը պետք է քննարկվեն իր փաստաբանի միջոցով կամ դատարանում, սակայն Փաստաբանը շարունակել է հարցադրումները: Բողոքաբերի պնդմամբ՝ Փաստաբանի վարքագիծը հակասել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետով սահմանված պահանջին, ինչպես նաև եղել է անհարգալից և ոչ պատշաճ:

Բողոքաբերը Փաստաբանին վերագրել է նաև ոչ պատշաճ արտահայտություններ թույլ տալը, այդ թվում՝ «ծնողավարման ճիշտ կանոններ չեն կիրառվում», «երեխան կարող է ժամը 4-ին քնել, դա նորմա՞լ է», ինչպես նաև «նյարդային նոպաների մեջ ենք» արտահայտությունները, որոնք, ըստ Բողոքաբերի, կասկածի տակ են դրել իր ծնողավարման կարողությունները, հոգեվիճակը և կարող էին ուղղված լինել իր հուզական վիճակի վրա ազդեցություն գործադրելուն:

Բացի այդ, Բողոքաբերը վկայակոչել է նաև երեխայի հետ լուսանկարվելու հանգամանքը և խնդրել է փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշներով:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 27.04.2026 թվականի թիվ 290-Ա որոշմամբ (**այսուհետև նաև՝ Որոշում**) փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>27.04.2026</u> **<u>թվականի թիվ</u>** <u>290-</u>**<u>Ա որոշման էությունը</u>**<u>.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ արձանագրվել է, որ Փաստաբանը թիվ ՇԴ/0212/02/25 քաղաքացիական գործով հանդիսանում է Աղասի Եգանյանի ներկայացուցիչը, իսկ Դիմողը և Փաստաբանի վստահորդը տվյալ գործով ունեն հակադիր շահեր:

Որոշմամբ գնահատվել է, որ 21.01.2026թ. շփումը տեղի է ունեցել ոչ թե Փաստաբանի կողմից առանձին նախաձեռնված հանդիպման պայմաններում, այլ դատարանի որոշմամբ սահմանված երեխայի տեսակցության ընթացքում, որին

Փաստաբանը մասնակցել է իր վստահորդի՝ երեխայի հետ շփման իրավունքի իրականացման գործընթացով պայմանավորված:

Որոշմամբ նշվել է, որ Փաստաբանի հարցադրումները, իրենց բովանդակությամբ, վերաբերել են երեխայի քնի, խնամքի և ծնողավարման կազմակերպմանը, այսինքն՝ այն փաստական պայմաններին, որոնք տվյալ պահին առնչվել են իր վստահորդի՝ երեխայի հետ տեսակցության իրականացմանը: Այդ պայմաններում նշված հարցադրումները գնահատվել են որպես վստահորդի շահերի պաշտպանության շրջանակում կատարված հարցումներ կամ դիտարկումներ, այլ ոչ թե որպես Կանոնագրքի 5.3 կետով արգելված անմիջական տեղեկության փոխանակում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ անդրադարձ է կատարվել նաև Փաստաբանի կողմից հնչեցված «նյարդային նոպաների մեջ ենք» արտահայտությանը և արձանագրվել է, որ ներկայացված նյութերից չի բխում, որ նշված արտահայտությունը հստակ, ուղղակի և անհատականացված կերպով հասցեագրվել է Դիմողին, կամ հնչեցվել է նրա անձը բնութագրելու, հոգեվիճակը գնահատելու կամ արժանապատվությունը նսեմացնելու նպատակով:

Ամփոփելով՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը գտել է, որ Դիմողի մատնանշած հանգամանքները չեն կարող առերևույթ հիմք հանդիսանալ Փաստաբանի վարքագծում Օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտում արձանագրելու համար, ուստի կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ ներկայացրած բողոքով, ըստ էության, պնդել է իր դիմումում ներկայացված դիրքորոշումը՝ միաժամանակ վիճարկելով Որոշման մեջ նշված իրավական և փաստական գնահատականները:

Մասնավորապես, Բողոքաբերի պնդմամբ՝ Որոշմամբ սխալ է մեկնաբանվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետը: Ըստ Բողոքաբերի՝ այն հանգամանքը, որ փաստաբանը գործում է իր վստահորդի շահերի պաշտպանության նպատակով, չի կարող ինքնին արդարացնել հակառակորդ կողմի հետ անմիջական հաղորդակցությունը, երբ այդ կողմն ունի ներկայացուցիչ: Բողոքաբերի գնահատմամբ՝ նման մոտեցման դեպքում Կանոնագրքի 5.3 կետով սահմանված սահմանափակումը կկորցնի իր գործնական նշանակությունը, քանի որ ցանկացած փաստաբան կարող է հակառակ կողմի հետ շփումը ներկայացնել որպես վստահորդի շահերի պաշտպանություն:

Բողոքաբերը նշել է, որ Փաստաբանն իրեն հարցեր է ուղղել երեխայի քնի, սննդի, խնամքի և ծնողավարման վերաբերյալ՝ առանց իր ներկայացուցչի մասնակցության, այն

դեպքում, երբ ինքը բազմիցս հայտնել է, որ հարցերին չի պատասխանելու և դրանք պետք է քննարկվեն իր փաստաբանի միջոցով կամ դատարանում: Ըստ Բողոքաբերի՝ Փաստաբանի վարքագիծը չի կարող դիտվել որպես տեսակցության ընթացիկ կազմակերպման հարց, այլ վկայում է իր ներկայացուցչին շրջանցելով քաղաքացիական գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու փորձի մասին:

Բողոքաբերը նաև վիճարկել է Փաստաբանի արտահայտություններին տրված գնահատականը՝ պնդելով, որ «ծնողավարման ճիշտ կանոններ չեն կիրառվում», երեխայի քնի ժամի վերաբերյալ հնչեցված ձևակերպումները, ինչպես նաև «նյարդային նոպաների մեջ ենք» արտահայտությունը եղել են անհարգալից, նվաստացնող և Փաստաբանի մասնագիտական էթիկային հակասող:

Բացի այդ, Բողոքաբերը նշել է, որ Փաստաբանի կողմից երեխայի հետ լուսանկարվելու հանգամանքը ևս պետք է գնահատվեր փաստաբանի մասնագիտական պարկեշտության, բարեխղճության և փաստաբանության նկատմամբ վստահությունը չխաթարելու պահանջների համատեքստում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Բողոքաբերը խնդրել է վերացնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2026թ. թիվ 290-Ա որոշումը և փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

4. **<u>Փաստաբան Հասմիկ Կարապետյանի համառոտ դիրքորոշումը</u>**.

Փաստաբանից բացատրություն չի պահանջվել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները՝

1. Թիվ ՇԴ/0212/02/25 քաղաքացիական գործով հայցվոր Աղասի Եգանյանի ներկայացուցիչը հանդիսանում է փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանը, իսկ Բողոքաբեր Միլենա Նիկոյանը տվյալ գործով հանդիսանում է հակառակորդ կողմ և ունի ներկայացուցիչ՝ փաստաբան Տիգրան Ղազարյան:

2. 21.01.2026թ. Բողոքաբերի բնակության վայրում իրականացվել է դատարանի որոշմամբ սահմանված երեխայի տեսակցությունը, որին ներկա են եղել Բողոքաբերը, Աղասի Եգանյանը, Փաստաբանը և այլ անձինք, սակայն Բողոքաբերի ներկայացուցիչը տվյալ պահին տեսակցությանը չի մասնակցել:

3. Տեսակցության ընթացքում Փաստաբանի և Բողոքաբերի միջև տեղի է ունեցել երկխոսություն երեխայի քնի, սննդի, խնամքի և ծնողավարման կազմակերպման հարցերի շուրջ, որի ընթացքում Բողոքաբերը մի քանի անգամ հայտնել է, որ չի ցանկանում

պատասխանել հարցերին և որ դրանք պետք է քննարկվեն դատարանում կամ իր ներկայացուցչի միջոցով:

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2026թ. թիվ 290-Ա որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Օրենքի 39.11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

1) **փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին**,

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ Օրենքով սահմանված հիմքերի առերևույթ առկայության դեպքում: Կարգապահական վարույթի հարուցման փուլում Պալատը պարտավոր է գնահատել ոչ թե փաստաբանի վարքագծի վերջնական կարգապահական որակումը, այլ այն, թե արդյոք ներկայացված փաստերը և նյութերը բավարար են փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ առերևույթ հիմնավորված ենթադրություն ձևավորելու համար:

Հետևաբար՝ կարգապահական վարույթի հարուցման հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին Բողոքաբերի պնդումը, եթե այն հիմնավորված չէ այնպիսի փաստական տվյալներով, որոնք իրենց բնույթով վկայում են փաստաբանի վարքագծում կարգապահական խախտման առերևույթ հատկանիշների առկայության մասին:

Միաժամանակ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ այն դեպքում, երբ փաստաբանի վարքագծի վերաբերյալ դիմումը ներկայացվում է նույն դատական գործով հակադիր շահ ունեցող անձի կողմից, Պալատը պարտավոր է առանձնացնել փաստաբանի մասնագիտական վարքագծի առերևույթ խախտումը դատավարական հակամարտությունից, կողմերի միջև առկա լարվածությունից կամ հակառակորդ կողմի գործողությունների նկատմամբ բնական դժգոհությունից: Նշվածը չի նշանակում օրենքով չնախատեսված լրացուցիչ շեմի սահմանում, այլ պահանջում է ներկայացված փաստերի գնահատում այն իրական փաստական համատեքստում, որտեղ տեղի է ունեցել վիճարկվող վարքագիծը:

Սույն գործով անվիճելի է, որ փաստաբան Հասմիկ Կարապետյանը թիվ ՇԴ/0212/02/25 քաղաքացիական գործով ներկայացրել է Բողոքաբերի հակառակորդ կողմի շահերը, իսկ Բողոքաբերը նույնպես ունեցել է ներկայացուցիչ: Անվիճելի է նաև, որ 21.01.2026թ. շփումը տեղի է ունեցել ոչ թե փաստաբան Հասմիկ Կարապետյանի կողմից առանձին նախաձեռնված հանդիպման կամ Բողոքաբերին առանձին հաղորդակցության մեջ ներգրավելու պայմաններում, այլ դատարանի որոշմամբ սահմանված երեխայի տեսակցության իրականացման ընթացքում՝ Բողոքաբերի բնակության վայրում:

Այս փաստական հանգամանքը էական նշանակություն ունի Կանոնագրքի 5.3 կետի կիրառելիության հարցը գնահատելիս:

Կանոնագրքի 5.3 կետը սահմանում է փաստաբանի և հակառակորդ կողմի միջև անմիջական հաղորդակցության սահմանափակման կանոն, որի նպատակը ոչ թե փաստաբանի և հակառակորդ կողմի միջև ցանկացած շփում առհասարակ բացառելն է, այլ այն իրավիճակները կանխելը, երբ փաստաբանը, իմանալով, որ հակառակորդ կողմը ներկայացված է այլ փաստաբանով, վերջինիս շրջանցելով փորձում է այդ անձի հետ դատական գործի կամ խնդրի վերաբերյալ այնպիսի հաղորդակցություն իրականացնել, որը կարող է ազդել նրա իրավունքների, դատավարական դիրքորոշման կամ իրավական պաշտպանվածության վրա: Նորմի իմաստով արգելված է ոչ թե յուրաքանչյուր խոսակցություն կամ գործընթացային շփում, այլ հակառակորդ կողմի ներկայացուցչին շրջանցելով գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկության փոխանակումը, հատկապես այն դեպքում, երբ այդ հաղորդակցությունը կարող է հանգեցնել իրավական նշանակություն ունեցող տեղեկության, դիրքորոշման, համաձայնության կամ այլ դատավարական առավելության ստացմանը: Միևնույն ժամանակ նույն նորմը ինքնին նախատեսում է բացառություններ՝ ընդունելով, որ գործնականում կարող են լինել իրավիճակներ, երբ հակառակորդ կողմի հետ շփումը ծագում է ոչ թե փաստաբանի կողմից ներկայացուցչին շրջանցելու նպատակադրմամբ, այլ օբյեկտիվորեն առկա գործընթացի շրջանակում: Այդպիսի դեպքեր են, մասնավորապես, երբ հանդիպումը նախաձեռնել է

հենց հակառակորդ կողմը կամ երբ համապատասխան գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ:

Սույն դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ վիճարկվող հաղորդակցությունը տեղի է ունեցել հենց այնպիսի փաստական պայմաններում, որոնք Կանոնագրքի 5.3 կետով նախատեսված բացառության շրջանակում են: Մասնավորապես՝ Փաստաբանի և Բողոքաբերի միջև շփումը տեղի է ունեցել ոչ թե Փաստաբանի կողմից առանձին նախաձեռնված հանդիպման, այլ դատարանի որոշմամբ սահմանված երեխայի տեսակցության իրականացման ընթացքում: Այդ գործընթացը տեղի է ունեցել Բողոքաբերի բնակության վայրում, իսկ Բողոքաբերի ներկայացուցիչը տվյալ պահին ներկա չի եղել:

Այսինքն՝ վիճարկվող հաղորդակցությունը ծագել է օբյեկտիվորեն ընթացող գործընթացի շրջանակում, որին Փաստաբանը մասնակցել է իր վստահորդի՝ երեխայի հետ տեսակցության իրավունքի իրականացմանն առնչվող շահերի պաշտպանության նպատակով: Հետևաբար միայն այն հանգամանքը, որ այդ գործընթացի ընթացքում Փաստաբանի և Բողոքաբերի միջև տեղի է ունեցել որոշակի խոսակցություն, ինքնին չի կարող նույնացվել Կանոնագրքի 5.3 կետով արգելված՝ հակառակորդ կողմի ներկայացուցչին շրջանցելով անմիջական տեղեկության փոխանակման հետ:

Խորհուրդը հարկ է համարում նաև նշել, որ Փաստաբանի կողմից երեխայի տեսակցության գործընթացի ընթացքում Բողոքաբերին ուղղված հարցադրումները, նույնիսկ եթե որոշակիորեն առնչվում էին քաղաքացիական գործով քննարկվող հարաբերություններին, իրենց բնույթով և համատեքստով չեն կազմել Կանոնագրքի 5.3 կետով արգելված հաղորդակցություն: Նշված հարցադրումները պետք է գնահատվեն ոչ թե որպես հակառակորդ կողմի ներկայացուցչին շրջանցելու ինքնուրույն գործողություն, այլ որպես դատարանի որոշմամբ ընթացող տեսակցության շրջանակում ծագած հաղորդակցություն:

Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ Փաստաբանը շարունակել է հարցադրումները Բողոքաբերի՝ դրանց չպատասխանելու դիրքորոշում հայտնելուց հետո, ապա Խորհուրդը գտնում է, որ այդ հանգամանքն ինքնին բավարար չէ Կանոնագրքի 5.3 կետի առերևույթ խախտում արձանագրելու համար:

Ներկայացված նյութերից չի հետևում, որ Փաստաբանի հարցադրումները դուրս են եկել դատարանի որոշմամբ իրականացվող տեսակցության ընթացիկ պայմանների քննարկման շրջանակից:

Խորհուրդն ընդունելի չի համարում Բողոքաբերի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ եթե փաստաբանը հակառակորդ կողմին հարց է ուղղում իր վստահորդի շահերի պաշտպանության նպատակով, ապա այդ հանգամանքն ինքնին պետք է դիտվի որպես Կանոնագրքի 5.3 կետի խախտում: Նման մոտեցումը գործնականում կբացառեր փաստաբանի մասնակցությունը իր վստահորդի իրավունքների իրականացման մի շարք

գործընթացներին, երբ այդ գործընթացի բնույթով պայմանավորված՝ նույն վայրում ներկա է նաև հակառակորդ կողմը: Կանոնագրքի 5.3 կետի նպատակը ոչ թե փաստաբանի մասնագիտական մասնակցությունը նման գործընթացներին արգելելն է, այլ հակառակորդ կողմի ներկայացուցչին շրջանցելով անթույլատրելի տեղեկատվության ստացման բացառումն է:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից հնչեցված արտահայտություններին, ապա Խորհուրդն արձանագրում է, որ դրանք պետք է գնահատվեն ոչ թե առանձին վերցված ձևակերպումների մակարդակում, այլ տվյալ հաղորդակցության փաստական համատեքստում: Սույն դեպքում նշված արտահայտություններն ու հարցադրումները հնչել են դատարանի որոշմամբ իրականացվող տեսակցության ընթացքում՝ երեխայի քնի, ռեժիմի և տեսակցության կազմակերպման հարցերի քննարկման շրջանակում: Թեև դրանք Բողոքաբերի կողմից կարող էին ընկալվել որպես իր ծնողավարման վերաբերյալ քննադատական գնահատականներ, այդուհանդերձ ներկայացված նյութերը բավարար չեն արձանագրելու, որ Փաստաբանի վարքագիծն այդ մասով առերևույթ դուրս է եկել մասնագիտական վարքագծի թույլատրելի սահմաններից:

Նույն գնահատականը վերաբերում է նաև «նյարդային նոպաների մեջ ենք» արտահայտությանը: Ներկայացված նյութերից չի բխում, որ նշված արտահայտությունը հստակ, ուղղակի և անհատականացված ձևով ուղղված է եղել Բողոքաբերի անձին: Արտահայտությունը ձևակերպված է բազմակի թվով և, ըստ ներկայացված նյութերի, հնչել է լարված իրավիճակի ընդհանուր գնահատման համատեքստում: Այն իր բովանդակությամբ և հնչեցման պայմաններով բավարար չէ արձանագրելու, որ Փաստաբանի վարքագիծն առերևույթ հակասել է Կանոնագրքի 2.2.1 և 2.2.2 կետերով նախատեսված մասնագիտական պարկեշտության, բարեխղճության և փաստաբանության նկատմամբ վստահության պահպանման պահանջներին:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից վկայակոչված Կանոնագրքի 4.1 կետին՝ Խորհուրդն արձանագրում է, որ նշված նորմը կարգավորում է փաստաբանի վարքագիծը դատարանում հանդես գալիս: Մինչդեռ սույն դեպքում Բողոքաբերի կողմից նկարագրված վարքագիծը տեղի է ունեցել ոչ թե դատարանում հանդես գալու կամ դատական նիստին մասնակցելու ընթացքում, այլ դատարանի որոշմամբ սահմանված երեխայի տեսակցության իրականացման վայրում: Հետևաբար, Բողոքաբերի վկայակոչած փաստական հանգամանքները, իրենց բնույթով, չեն առնչվում Կանոնագրքի 4.1 կետով կարգավորվող հարաբերություններին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ բողոքում ներկայացված փաստարկները չեն հերքում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ կատարված հիմնական եզրահանգումը՝ փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման բացակայության վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի դիմումում և բողոքում նկարագրված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման վերացման համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 39.11-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2026 թվականի «Փաստաբան Հասմիկ Միքայելի Կարապետյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 290-Ա որոշման դեմ Միլենա Ալեքսանի Նիկոյանի կողմից 13.05.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2026 թվականի թիվ 290-Ա որոշումը:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Արսեն Հարությունյան**

12 հունիսի 2026թ.
թիվ ԿԳ/13-Ա
ք. Երևան